

ՉԵՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ
ՀԱՅ ՍԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

Անցյալ դարի վերջին քառորդում հայ իրականության մեջ բացառիկ հետաքրքրություն է դրսևորվում սլավոնական ժողովուրդների պատմության նկատմամբ:

Հայ հրապարակախոսական միտքը ընդառաջելով սլավոնական ժողովուրդների ամբողջական, կամ մասնակի ազատագրության փաստին, փորձում էր յուրովի լուծել և սլավոնական ժողովուրդների ճակատագրի հետ ինչ-որ շահով կապված բազմակնճիռ հայկական հարցը:

Անգլիական պառլամենտի պարագլուխներին և եվրոպական հասարակական գործիչներին ուղղված դիմումները, հայկական հարցի, և, առանձնապես 1895—96 թթ. եղեռնի կապակցությամբ Անգլիայում պարբերաբար հրավիրվող մասսայական միտինգներն ու ժողովները, եվրոպական գործիչների և հասարակ քաղաքացիների ելույթներն ու կոչերը, հույսերը՝ կապված ուսական կայսրության հետ, տաճկական Հայաստանի փրկության պատրանքներ էին ստեղծում, որոնք, սակայն, կարճատև առկայծումներից հետո ավելի էին ուժեղացնում հայ ժողովրդի հուսախաբույթյունը:

Տարիներ շարունակ հայ հրապարակախոսները հարցի բանական լուծման ճանապարհներ էին որոնում, ի թիվս որոնց նրանք դիմում են նաև հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն արթնացնելու, հայ մտավորականությանը ազգապահպանման գաղափարով զինելու միջոցին:

Անցյալ դարի վերջին քառորդի հայ ականավոր հրապարակախոս Աբգար Հովհաննիսյանը այդ նկատառումներով հրապարակում է բազմաթիվ նյութեր՝ կապված սլավոնական ժողովուրդների պատմության, մշակույթի և գրականության հետ: Դրանցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Չեխոսլովակիայի պատմության հետ առնչվող նյութերը, որոնք հրատարակվել են «Փորձ» և «Արձագանք» պարբերականներում 1877—1897 թվականներին:

Չեխոսլովակիայի պատմության մեջ հայ հրապարակախոսի ուշադրությունը գրավում են չեխ ժողովրդի դարավոր պայքարի դրվագներն օտար նվաճողների դեմ, ազգային լեզվին քաղաքացիական իրավունքներ տալու նրանց ջանքերը, ազգապահպանման համար մղվող պայքարում ժողովրդական լայն խավերի միասնական գործունեությունը:

Չեխական նյութերի հրապարակումը, հարկավ, հետապնդում էր մեկ նպատակ. թուրքական բռնապետական լծի տակ հեծող հայ ժողովրդին ցույց տալ փրկության ելքը՝ միասնական պայքարի ճանապարհը, որով ընթացել և շոշափելի արդյունքների էր հասել չեխ ժողովուրդը: Այսպես, 1877 թ. «Փորձ» հանդեսում տպագրվում է «Վյաչեսլավ Հանկա» ծավալուն հոդվածը՝ նվիրված չեխ ազգային շարժման ականավոր գործիչ, գրող և լեզվաբան Վյաչեսլավ Հանկայի կյանքին ու գործունեությանը: Խմբագիրը չի թաքցնում հոդվածը

տպագրելու իր նկատառումները. «Հանկայի ջերմ ազգասիրությունը և նորուկատարած ծառայությունը յուր ազգի նոր գրականության մեջ կարող է մի ամենագեղեցիկ օրինակ լինել»¹: Բնորոշ է այն, որ հոգվածն սկսվում է մի պատմական ակնարկով, 1620 թ. Բելոգորյան ճակատամարտի նկարագրությամբ, երբ Չեխիան վերջնականապես զրկվում է անկախությունից և երկրում սկսում է մոլեզնել հարսբուրգյան անսանձ ոեակցիան:

Հանկան իր գործունեության առաջին իսկ քայլերից նվիրվում է ժողովրդի վերածնության գործին: Նրա համար կողմնորոշող նշանակություն են ստանում ժամանակի նշանավոր գիտնական և հասարակական գործիչ Յունգմանի խրատական խոսքերը. «աշխատեցիք, միայն առաջվա պես լուռ և առանց աղմուկ բարձրացնելու, ուր և ինչպես միայն հարկավոր է, որպեսզի մեր ազգությունը շիրջի. գալոց սերունդները շնորհակալ կլինեն ու կօրհնեն ձեզ ձեր աշխատության համար»: Ոչ առանց որոշակի նպատակի է, որ Աբգար Հովհաննիսյանն, այնուհետև, մեջ է բերում հետևյալ ծրագրային միտքը. «այն ժամանակ հասկացավ նա յուր գործի քաղաքական նշանակությունը. լեզվի պաշտպանությունը դարձավ միանգամայն և ազգության պաշտպանություն»: Սրան հետևում է Հանկայի գործունեության, չեխ ժողովրդի մշակութային կյանքի, նրա հոգևոր վերածնության հանգամանալից պատմությունը: Վեր են հանվում Հանկայի և ժամանակի չեխ մտածողներ Շաֆարիկի, Կոլլարի, Յունգմանի, Չելաևիովսկու հայրենանվեր գործունեության հետ կապված բազմապիսի փաստեր²:

Հետագայում «Արձագանքի» էջերում Հովհաննիսյանը հրապարակում է չեխական մշակութային կյանքի առանձին երևույթներն արտացոլող մի շարք հոգվածներ, որոնց ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում խմբագրի հայացքներն այդ հարցում: Ահա «МОСКОВСКИЕ ВЕДОМОСТИ» լրագրից բաղված մի հաղորդում՝ չեխական ազգային թատրոնի բացման առթիվ («Ձանազան լուրեր»): Թատրոնի շենքի շինության փաստն ինքնին պերճախոս է: Առանց կոռավարությունից նպաստ ստանալու, ժողովրդից հանգանակած միջոցներով 1868 թ. հիմնադրվում է թատրոնի շենքը, որը, սակայն, 1881 թ. հրդեհի ճարակ է դառնում: Կոկին ժողովրդի միջոցներով հավաքված գումարով այնուամենայնիվ ազգային թատրոնը կառուցվում է և 1883 թ. տեղի է ունենում նրա բացումը: Հաղորդման վերջին հատվածն անուղղակիորեն շեշտում է դրա տպագրության նպատակը: «Չեխական թատրոնի բացումը Պրագայում, ազգային նվիրատվության շնորհիվ, մեծ նշանակություն ունի չեխերի համար. սա մի արձան է չեխերի վերակենդանության: Չեխ ազգասերները թոթափելով արխիվներում մոռացված իրանց ազգային զգեստների փոշին, հիշել տվին ազգին իրան անցյալը, գրվանի տակից հանեցին նրա հին գրականությունը: Չեխերի առաջին գիտնականները անցյալ դարի վերջերում և ներկա դարի սկզբներում իրանք էլ չէին հավատում, որ կարելի է կենդանացնել չեխական լեզուն գրականության համար և ազատել իրանց ազգը կատարելապես գերմանացի դարձ-

1 «Փորձ», 1877, № 4:

2 Նույն տեղում, էջ 252—285:

3 Չեխական նյութերը գլխավորապես թարգմանություններ էին ուսական «С. Петербургские ведомости», «Московские ведомости», «Мир божий» պարբերականներից: Որոշ նյութերի աղբյուրները չեն նշվում: Բնականաբար, այս դեպքում ոչ այնքան կարևոր են աղբյուրները, որքան նյութերի ընտրության նպատակասլացության երևույթը:

նկույց, Բայց շի անցել ՚/՝ զար և այժմ շեխերն ունին իրանց համալսարանը, իրանց ժողովրդական թատրոնը, իրանց բավական հարուստ գրականությունը, համեմատաբար հարուստ գիտությունները, և մինչև անգամ խոշոր հեղինակություն վայելող գիտնականներ, որպիսին է օրինակ Շաֆարեկան»⁴:

Սակայն շեխական մշակութային կյանքի առավել նշանակալից երևույթը նրանց ազգային «Չեխական դպրոցական Մատիցա» ընկերության գործունեությունն էր, որին մի քանի հոդված է նվիրել «Արձագանքը»:

«Մատիցան» համասլավոնական մշակութային ընկերությունն էր, որն իր մասնաճյուղերն ուներ առանձին երկրներում և որի ստեղծումը կապված էր այդ ժողովուրդների ազգային վերածնության գաղափարի հետ: «Արձագանքը» հանգամանորեն ծանոթացնում է սերբո-լուծիցյան ազգային վերածնության պործիչ, պատմարան, ազգագրագետ, հրապարակախոս Յան էրնստ Սմոլերի և մյուս հայրենասերների նախաձեռնությամբ 1847 թ. հիմնադրված «Մատիցա» ընկերության գործունեության կեսդարյա պատմությանը և լուծերի ազգապահպանման ուղղությամբ ընկերության ձեռք առած միջոցառումներին⁵: Այնուհետև Արդար Հովհաննիսյանը ծավալուն մի հոդվածով հայ ընթերցողներին է ներկայացնում և 1880 թ. հիմնադրված «Չեխական դպրոցական Մատիցա»-ի գործունեությունը: Գերմանական նվաճողներին դիմադրելու համար, շեխ հայրենասերները վճռում են օգտագործել նրանց իսկ ղեկերը՝ մամուլը, դպրոցը, գրականությունը: «Դպրոցական Մատիցան» կարճ ժամանակում հսկայական միջոցներ կուտակելով՝ Չեխսովակիայում հիմնադրում է մեկ գիմնադիա, 33 դպրոց, 33 մանկական ապաստարան: Այս հոդվածն, անկասկած, ազգասիրական-լուսավորական գործունեության մի անուղղակի կոչ էր՝ հայ ժողովրդին⁶:

«Արձագանքն» անդրադառնում է և այն բանավեճին, որը 1897 թ. ծավալվում էր Ավստրո-Հունգարիայում՝ տեղական սլավոնական լեզուների վերաբերյալ հրատարակված օրենսդրության առիթով⁷: Բանն այն էր, որ ըստ այդ օրենսդրության, շեխերն իրավունք էին ստանում վարչական հիմնարկներում և դատարաններում օգտագործելու մայրենի լեզուն: Դերմանական պաշտոնական գործիչների մի ստվար խումբ ռախստագի նիստերում, Վիեննայի պառլամենտում և քաղաքային խորհրդում այդ որոշումը դիտում է իբրև «գերմանական ողջ ազգը ստորադնող» փաստաթուղթ: Կայսեր ուղղած իրենց դիմումով նրանք ահազանգում էին, թե իբր «շեխական լեզվին արտոնություններ տալը սպառնում է գերմանական լեզվի տիրապետությանը»: Նրանք պահանջում էին շեղյալ հայտարարել Չեխիայում և Մորավիայում մտցված կարգադրությունը շեխական լեզվի մասին: Հունգարական մամուլը խոսելով «ավստրիական գերմանացիների այդ խաշակրաց արշավանքի» մասին, բարձրաց-

4 «Արձագանք», 1883, № 50:

5 Լուծերը սլավոնական ծագում ունեն. նրանց լեզուն շատ մոտ է շեխերենին և լեհերենին: Սկսած 10-րդ դարից լուծերը գտնվել են գերմանական նվաճողների լծի տակ և ամենաբոնի միջոցներով ենթարկվել գերմանացման: Ներկայումս ապրում են ԳՊՂ տերիտորիայում: 1945 թ. ԳՊՂ սահմանադրությամբ նրանք ստացել են ազգային լեզվի և մշակութի զարգացման լիակատար հնարավորություններ: (Տե՛ս «Արձագանք», 1897, № 53):

6 «Մատիցայի աշխարհում» (տե՛ս «Արձագանք», 1896, № 18):

7 «Ավստրո-Հունգարիա» (տեղական մայրենի լեզուների իրավունքը և նրա թշնամիները), «Կրկին շեխերի պայքարը գերմանացիների դեմ լեզվի վերաբերմամբ»: (Տե՛ս «Արձագանք», 1897, № 52, 57):

նում է «ստրկացած, կողոպտված, ճնշված մաջառական ազգերի» իրավունքների պաշտպանության հարցը: Հատկանշական է այն բազմիմաստ վերջաբանը, որ կցում է հողվածին «Արձագանքի» հրատարակողը: Նկատի ունենալով ավստրիական գերմանացիների պահանջը՝ օրենսդրական ճանապարհով շեղյալ հայտարարելու շեխական լեզվին տրված արտոնությունները և այն անվանելով «անարգ ագիտացիա», նա գրում է. «Հասկանալի է, իհարկե, թե ի՞նչ հետևանքներ կարելի է սպասել, եթե ավստրիական կառավարությունը այդպիսի մի սխալ քայլ աներ, որովհետև Հունգարիան Տանկաստան չէ, որ կարելի լինի անպատիվ ազգերի լեզուները կտրել»⁸ (ընդգծումը մերն է):

Այս պոռթկումը ավելի քան տեղին էր, 1895—96 թթ. հայկական եղեռնի անմիջական հետևանքը, որի մասին, սակայն, հայ հրապարակախոսները գրաքննական նկատառումներով չէին կարող արտահայտվել մամուլի էջերում:

Զնխական հողվածների շարքն «Արձագանքում» ամփոփվում է «Զեխերի պետական իրավունքը» հողվածով, որը թեև ժամանակագրական կարգով գրվել է ավելի վաղ, 1890 թ., բայց արգելվելով գրաքննական կոմիտեի կողմից, մնացել է կովկասյան գրաքննական վարչության արխիվում:

Հեղինակը հանգամանալից իր հողվածում անդրադառնալով ավստրիական բռնապետության քաղաքականությունը, ընդգծում է այն փաստը, որ 1848 թ. հեղափոխությունից հետո ավստրիական կայսրությունը հարկադրված եղավ փոխել վերաբերմունքը իր տիրապետության տակ գտնվող ազգությունների նկատմամբ: Տարբեր ազգերի ներկայացուցիչներին գծտեցնելու, նրանց միմյանց հակադրելու նախկին քաղաքականությունը փոխարինվում է «փոխադարձ սեր» և «համերաշխություն» քառուղիներով: 1867 թ. սահմանադրությամբ, իտրիավիան, Սլովակիան, Գալիցիա տեղական ինքնավարություն են ստանում: Հունգարիան ինքնուրույն է դառնում, իսկ այդ ժողովուրդների լեզուները պետական-պաշտոնական լեզվի իրավունք են ձեռք բերում:

«Սակայն, հինգ միլիոն շեխական ազգաբնակչություն ունեցող բոհեմիան չի բավականանում դորանով: Չեխերը հետզհետե ցանկություն են հայտնում, որ 1620 թվականին Բելոգորյան ճակատամարտում իրանց կորցրած, իրանց ներքին պետական անկախությունը վերականգնվի և կապված լինելով ընդհանուր պետության հետ հավիտենական միությունով (union reelle), այժմյան Հունգարիայի նման ունենա յուր առանձին պետական հիմնարկությունը, և իբրև դորա հետևանք հարստության կայսրերը պսակացնէ բոհեմական թագով: Այդպես շեխերը երկու և կես դար իրանց անկախությունը կորցնելուց հետո նորից հույս են տանում իրանց ընդհատված պետական իրավունքը վերականգնեցնելու: Եվ նոցա այդ հույսը ապարդյուն չէ»¹⁰ (ընդգծումը մերն է):

Ակներև է, որ հատկապես հողվածի վերջին պարբերությունը, որն ազդարարում էր ազատագրված շեխ ժողովրդի անկախությունը վերստանալու հեռանկարի հնարավորությունը, ուղիղ գծով կապվում էր հայ իրականությանը հուզող հարցերին և, հետևապես, վախեցնում ցարական գրաքննության շինով-

⁸ Նույն տեղում, 1897, № 57:

⁹ Հողվածը կրում է Կ. Ց. ստորագրությունը և, մեր կարծիքով, պատկանում է Կարապետ Ցաղուրյանցի գրչին, որը 1885 թվականից վարում էր «Արձագանքի» արտաքին տեսության բաժինը:

¹⁰ Վրացական պետական պատմական արխիվ, ֆոնդ 480, դործ 994, թերթ 9:

նիկներին: Թեև ընթերցողների լայն շրջանների համար նախատեսված այս հոդվածը չի հասնում նպատակին, բայց, այնուհանդերձ, ուշագրավ է իբրև երևույթ:

Իր պատմությամբ և ազատասիրական ավանդներով հայ ժողովրդին մոտ կանգնած չևիս ժողովրդի հետևողական պայքարի և հայրենասիրական շարժումների օրինակով հայ հրապարակախոսները դաստիարակել են հայ ժողովրդին, նրա համար ճակատագրական 80—90-ական թվականներին, երբ Տաճկահայաստանում հայերը ֆիզիկական բնաջնջման վտանգի մեջ էին, իսկ ցարիզմը Ռուսաստանում փոքր ազգություններին ոռոսիֆիկացնելու որոշակի քաղաքականություն էր տանում:

М. А. МХИТАРЯН

ОТРАЖЕНИЕ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ
ЧЕХОСЛОВАЦКОГО НАРОДА НА СТРАНИЦАХ
АРМЯНСКОЙ ПЕЧАТИ

Р е з ю м е

В конце прошлого века на страницах восточноармянской периодической печати появляются статьи, посвященные жизни и культуре славянских народов, а также отдельные произведения их литературы.

Автор информации останавливается, в частности, на фактах печатания чехословацких материалов на страницах журнала «Пордз» и газеты «Ардзаганк», издававшихся Абгаром Иоаннисяном.

Упомянуты такие статьи, как: «В мире Матицы», «Открытие национального театра в Праге», «Вячеслав Ганка» и др. Особый интерес представляет неопубликованная статья «Государственное право чехов», запрещенная в 1890 году Кавказским цензурным комитетом.

На примере борьбы чехословацкого народа, стремившегося осуществить возрождение своего национального языка, литературы и культуры, А. Иоаннисян пытался поддержать дух армянского народа в трудные для него дни, когда геноцид 1895—1896 гг. угрожал физическому существованию армян в Турецкой Армении, а царские власти пытались русифицировать народы Закавказья.